

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը
6 ռուբլի:
Առանձին համարները ԱՄՆ \$ 5 40 Գ.
Թիֆլիսում գրվում են խմբագրության մէջ:
Մեր հասցեն Թիֆլիս, редакция «Мшакъ»
Базарная ул. д. Таманцева № 16.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տոն օրերէն):
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լիւրով
Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր տողատոկին 10 կոպէկ:
Տէլէֆոն № 253.

Եղբ. Ա. Եւ եւա. ԱԼԵՎԱՆԳԻ

խանութում, Գօլօվիսկի պրուպեկտի վրա

Առեւտրի պարտքերի և պարտքերի

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԷԺԱՆ ՎԱՃԱՌԲ

ՏՂԱՄԱՐԿԱՆ ՍՊԵՏԱԿԵՂԵՆ
40% գեղջով
— ԿԱՆԱՆ ՍՊԵՏԱԿԵՂԵՆ —
40% գեղջով

ՍԵՂԱՆԱՏԱՆ ՍՊԵՏԱԿԵՂԵՆ
և
— ԲԱՐԱՆ —
Մինչև 30% գեղջով

ԿԱՆԱՆ ՍՊԵՏԱԿԵՂԵՆ
Մինչև 35% գեղջով
— ԳՈՂԴՊԱՆԵՐ —
Մինչև 40% գեղջով

Կանանց բոլոր կտորները և բոլոր կտորները
50% գեղջով և աւելի
Վերականգնող և աւելի
Մինչև 40% գեղջով

128. 0—4

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Կիրակի, մարտի 15-ին

Յօդուտ Զուգործելի հայոց ծխական երկաւու դպրոցի
Կը խաղաղի ուսուցիչ լիւրով
БОЛТУШКА
Կօմիտա 3 գործ, հեղ. Լ. Իվանովի
ԿՈՆՏԵՐՍԱՅԻՆ ԲԱՍԻՆ
Բարեհաճ մասնակցութեամբ օր. Բաւթարա- ձէի, Միլոփոփայի, Բիմիկո, Պապովսկի և պ. պ. Միլոփոփայի, Բիմիկո, Պապովսկի և պ. պ. Միլոփոփայի, Բիմիկո, Պապովսկի
Սկիզբը երեկոյան ժամը 8-ին:
Բեմական Բ. Բարեհաճ
Զուգործելի ա. Աստ. Կիկոյանի ծխա- կան դպրոցի Հոգաբարձութիւն
ա. 212. 2—1

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ

Առաջինը Պարտքերը յայտնում է ի գիտութեան
անդամներին, որ մարտի 17-ին, երեք-
շաբթի, երեկ. ժամը 9-ին, նշանակված է

Ընդհանուր ժողով

հետեւեալ անդամներին հարցերի քննու-
թեան համար. ա) ուսուցիչ Երեմիկոս և
Լիւկիւսովսկի—հետ կապված պայմանա-
նագրի նախագիծը հաստատելու և ամառա-
յին շինութիւնը էլեկտրականութեամբ լուս-
նաւորելու մասին, 2) ամառային շինութեան
վերաբերմամբ դարձրանք ձեռք բերելու
համար դրամ յատկացնելու մասին և գ) այլու
կաշկարային ձեռք բերելու համար
դրամ յատկացնելու մասին:
ԱնժՆՍ. Ընտանեկան երեկոյնը մարտի
17-ի փոխարին յետաձգվում է հինգշաբթի,
մարտի 19-ին:
(12, 17) ա. 213. 2—1

ՍԿՋՐՈՒՄԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Թիֆլիսի քաղաքային դուռնի վեր-
ջին նիստում ստեղծվեց մի հարց, որ
սկզբունքային առաջին նշանակութիւն
ունի ՈՐ տեսակի ուսման—ստորին
թէ բարձր—պէտք է նպաստել:
Այս հարցը ծագեց հանգուցեալ Շամ-
խարեանի կապած գումարի գործա-
դրութեան առիթով: Շամխարեանը թո-
ղել է քաղաքին իր ամբողջ դրամը,
որի տոկոսներով քաղաքը պէտք է
թողաւորները պահէ, գլխաւորապէս
նայիրից, կրթական հաստատութիւն-
ների մէջ: Արդ, թողալ տալ բարձր
կրթական հաստատութիւնների հա-
մալարանների և մասնագիտական
բարձր ուսումնարանների ուսանողնե-
րին, թէ ստորին տարրական և միջ-
նակարգ դպրոցում սովորող սաներին,
կամ այլ խօսքերով՝ քաղաքի ուսման ա-
ւելի նպաստել, տարրական-միջնակարգ
թէ բարձրագոյն:

Մի քանի ձայնաւորներ դեկլարա-
վելով այն տեսակետով, որ մեր մէջ
արդէն բարձր ուսումնական ստանդարտի
թիւը շատ մեծացել է, և նրանք, հա-
մայարանականները, կենտրոնացւում
քաղաքներում և գլխաւոր կենտրոննե-
րում, ոչ մի օգուտ չեն տալիս զա-
ւանդունքի և գիւղերին, գտնում էին,
որ այժմ աւելի դարձ պէտք է տալ
նախնական ուսման տարածման ժո-
ղովրդի մէջ: Պէտք է,—ասում էին
նրանք,—աշխատել աւելի շուտ գրագի-
տութիւնը տարածել, գիտութեան
տարրական տեղեկութիւններն աւան-
դել ժողովրդին, աշխատել որ տարրա-
կան կրթութիւնը համառոտ լինի:
Հասարակական և բարեգործական
գումարներով պէտք է նպաստել տար-
րական և ոչ բարձր կրթութեան, ո-
րովհետեւ,—պատճառաբանում էին ո-
ւսման,—բարձր կրթութիւնը ստացողնե-
րը ոչ մի իրական օգուտ չեն բերում
ժողովրդին, գիւղացիութեանը:

2-է կարելի որոշ չափով չը համա-
ձայնվել այն կարծիքին հետ, որ, ար-
դարեւ, շատ անձինք, որոնք թէ մաս-
նաւոր և թէ հասարակական բարեգոր-
ծական նպատակներով ստացել են ու-
սում, իրանց բարոյական պարտաւո-
րութիւնը չեն համարել վերադարձնել
իրանց պարտքը ժողովրդին կամ հա-
մայարակութեանը, այլ, շնորհիւ բարձր
ուսման, անձնական բարեկեցութիւն
ձեռք բերելով, փառաւոր ապարդէզ
ստեղծելով իրանց համար, ոչ մի ի-
րական օգուտ չեն տուել ժողովրդ-
ին: Բայց, այնուամենայնիւ, սխալ
կը լինէր կազմել վերջնական լուս-
նաւոր այդ փառաւոր հիման վրա,
թէ պէտք է բոլորովին զանցա-
նութեան տալ բարձր ուսումնական,
թէ բարձր ուսումնական ստացողներին թիւը
շատ է: Ոչ, մեր ժողովուրդը դեռ
շատ պէտք ունի ինտելիգենցիայի և
բարձր կրթութիւն ստացած ինտելի-
գենցիայի, որովհետեւ տգիտութիւնը,
խաւարը դեռ համատարած է:

Համարտութիւնը միջին ձանադարն
ընտրելն է. պէտք է տարրական կրթ-
ութեան մեծ գործի տալ, պէտք է
ամեն միջոց գործ գնել դրագիտու-
թիւնը տարածելու, բաց և չը պէտք է
զանցաւորութեան տալ բարձր ուսումնա-
նական:

ԱՆՍՏՐՈ-ՍԵՐԲԻԱՆ ԶԳՆԱԺԱՄԸ

Վիեննա, 10 մարտի
Պատգամաւորների ժողովում հեր-
թական գործերին անցնելուց առաջ
Ինկերտ յայտարարեց, մասնագործ ա-
նելով, որ սերբիական պատասխան
յայտարարելը չէր համապատասխանում
կառավարութեան սպասելիքներին: Ըս-
տացված տեղեկութիւնների համա-
ձայն, այդ պատասխանը անդոսացու-

ցել է համարեցին և ուրիշ կարելիէտնե-
րը: Կառավարութիւնը զգուշացաւ ան-
յայտ պատասխան տալուց, որովհե-
տեւ Աւստրիայի իսկոյն եւթ ներ-
կայացած առաւորութիւնը աւելի ևս
սուր կերպարանք կը տար դրութեա-
նը, որից կառավարութիւնը, որքան
զաւաթված է նրանից, ցանկանում է
խուսափել: Նրա նպատակն է ապա-
հովել և ամրապնդել մի դրութիւն, որ
ստեղծվել է միացումը յայտարարվե-
լուց յետոյ: Յարձակողական դիտաւո-
րութիւններ նա չունի: Նա չէ հետե-
ւում պրեստիժի քաղաքականութեան:
Նա գերազանցում է շատ չը շտապել
իր պատասխանով այն պատճառով ևս,
որ ստացված տեղեկութիւնների հա-
մեմատ, ուրիշ պետութիւնները դի-
տաւորութիւն ունեն նորից դիմել Սեր-
բիային խորհուրդներով, որոնց այս
պայման, պէտք է յուսար, ամբողջա-
պէս կը հետևի: Մինչև արդարեւ
հետեւեալ խօսքերով: «Մենք այսօր ևս
հաւատարմի ենք մնում այն մեթոդին,
որին հետևում էինք մինչև այժմ, և
ձեռք ենք կարկատում Սերբիային, որ-
պէտք է նա կարողանայ, հասկանալով
իր դրութիւնը, ընդունել այդ ձեռքը»
(Հ. Գ.)

Վիեննա, 10 մարտի
Առաւոր միմիայր Բեյսինիէքը ընտ-
րողներին ժողովում ձառ արտասանեց,
որի մէջ այն համոզմունքը յայտնեց,
որ կառավարի խուսափել պատերազմի
սարսափներից: Նա յայտնեց, որ իր հետ
նոյն զգացմունքներով են ստեղծված
հարաւոր մարդիկ, որոնք սակայն
միաժամանակ կարծում են, որ եթէ
գործը պատերազմի հասնի, այն ժա-
մանակ Աւստրիայի ժողովուրդները կը
գործեն միաբան, պաշտպանելով ի-
րանց իրաւունքները: (Հ. Գ.)

ՌԱԶՄԱՆԱԿԵՐԸ ԱՆԿԻՆԱՅՈՒՄ

Լոնդոն, 10 մարտի
Համայնքների պալատում վիճաբա-
նութիւնները ժամանակ, նաւատորմի
գլխաւորական կազմը 120,000 հոգու
հասցնելու օրինագիծը առիթով սըր
Դիլկը յայտնեց, որ հիմք չը կայ ան-
հանգստանալու: Անգլիական կառա-
վարութիւնը որոշակի յայտնում է, որ
գերմանական կառավարութիւնը բնաւ
մատափը չէ շտապեցնել նաւաշինու-
թեան իր ծրագիրը: (Հ. Գ.)

Լոնդոն, 10 մարտի
Համայնքների ժողովում Դիլկի ձա-
նայ յետոյ խօսեց Ասկիլտ, յայտնե-
լով, որ արտակարգ պարագայի պատ-
ճառով ինդուստրիալ և յետաձգել օրէկ
դատողութիւն չի եղել Գրեյի հարցա-
գրութիւնը լսելը: Ասկիլտ շեշտեց

Գերմանիայի և Անգլիայի իրաւունքը
սեփական շահերն ի նկատի ունենալ
ազգային պաշտպանութեան գործում,
ասաց, որ ճակատակն է՝ ցրել անմիտ
առասպելները Անգլիայի ոչ-բաւարար
պատրաստութեան մասին ծովի վրա:
1909 թ-ի վերջում Անգլիան իր արա-
մաւորութեան տակ կունենայ «Դրէդ-
նաուտ» տեսակի եօթ նաւեր Գերմա-
նիայի նոր տիպի երկու նաւերի դէմ:
Մինչև արդ ուշագործիւն հրաւիրեց
անգլիական զորակիւնների մեծ նա-
ւատորմի վրա, որ կառուցված է մին-
չև «Դրէդնաուտների» շրջանը: Անգ-
լիայի ազգաբնակչութիւնը պատշաճա-
ւոր դադափար չունի այդ նաւատորմի
գործութեան մասին, այն ինչ այդ հըս-
կայական նաւատորմը ունեցած ժամա-
նակ չափազանց անմիտութիւն է եր-
կրել և անհանգստութեան զգացմունք
ունենալ: Ապա Ասկիլտ մատնացոյց
արեց, որ նաւատորմ կառուցանելու
հարցը անցեալ տարի յաճախելի կար-
ծիքների ոչ-պաշտօնական փոխանա-
կութեան առարկայ էր Գերմանիայի
և Անգլիայի կառավարութիւնների մի-
ջև: Անգլիական կառավարութիւնը ոչ
մի առաւորութիւն չարեց, որովհե-
տեւ նրան հասկացնել տուին, որ գեր-
մանական նաւակառուցման պրոգրամը
կազմված է օրինական կարգով և ոչ
մի կերպ կախում չունի Մեծ-Բրիտա-
նիայից: Ապա շարունակելով վիճաբա-
նութիւններից յետոյ, որոնց ժամա-
նակ Բալթիկ պատճառաբանում էր
իր մտքած առաւորութեան հիմնա-
ւորութիւնը՝ կարելիէտն պատրա-
ւում յայտնելու մասին, իսկ ազա-
տաւոր կուսակցութեան մի քանի
հետեւորներ պահանջում էին նաւա-
կառուցման պրոգրամի ընդարձակու-
մը, նաւատորմի ներկայ կազմին վե-
տաբերել օրինագիծը միաձայն ըն-
դունելուց: Բալթիկի առաւորութեան
քննութիւնը նշանակված է մարտի
16-ին: (Հ. Գ.)

Լոնդոն, 10 մարտի
Համայնքների պալատում երէկվայ
վիճաբանութիւնների ժամանակ Լոն-
դէնը հարց տուեց կառավարութեանը,
թէ յուրիս ամօտ յայտնի էր, արդեօր,
որ կրուպը իր գործարանները ըն-
դարձակելու նպատակով մեծ փոխառու-
թիւն է կնքել, որովհետեւ գերմանա-
կան կառավարութիւնը, իր նաւաշի-
նութեան ծրագիրը արագացնելու հա-
մար, նրան մեծ պատուէրներ է տուել:
Մակկէնի պատասխանեց, որ կրուպ-
ի գործարանների ընդարձակումը ծո-
ւապետութեան յայտնի էր դեռ յու-
րից առաջ, ինչպէս և այլ, որ զրա
պատճառով մի քանի գրահանութեան
կառուցման ժամանակամիջոցը Գեր-
մանիայում կրճատվեց ինն ամսով, այդ
հանգամանքը սակայն չը պէտք է
ցոյց տայ, թէ գերմանական կառա-
վարութիւնը մտադիր է ժամանակից
առաջ ձեռնարկել այն նաւերի կա-
ռուցման, որոնք հաստատված կան
նաւաշինութեան ծրագրում: (Հ. Գ.)

Լոնդոն, 10 մարտի
Համայնքների պալատ: Գրեյը է-
ղաւար թղաւարի Բեյլի գնաւուն վե-
րաբերեալ ուղղված հարցապնդումին
պատասխանեց, որ ոչ մի հարց չէ
բնովի անգլիական և գերմանական
նաւատորմների համեմատական ոյժի
մասին ոչ անցեալի, ոչ ներկայի, ոչ
էլ ապագայի նկատմամբ: (Հ. Գ.)

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Հոռ, 10 մարտի
Տիւտոնի մօտ կայացաւ նախա-
ձայն, որին ներկայ էին Ռիֆտա փաշան,
Հոռի թիւրքաց գեապանը և Լոնդոնի
խալայկան դեսպանը: (Հ. Գ.)

Հոռ, 10 մարտի
Տիւտոնին փոխ-այցելութիւն արեց
Ռիֆտա փաշային, յետոյ Ռիֆտա փա-
շան այցելեց Զիօլէտտին: Վարդ ներ-
կայ էր լինի պարլամենտի բացմանը,
երեկոյան կը մեկնէ Վիեննա: (Հ. Գ.)

Լոնդոն, 10 մարտի
«Թայմը» մարտի 9-ին Թէհրանից
տեղեկութիւններ ստացաւ, որ առ-
սական և անգլիական միասնաբեր ըն-
դոքեցին շահի առաջ այն բարբարոս
գործեակներով դէմ, որ ցոյց են տա-
լիս Բահմ խանի ձեռքի տակ գտնվող
շահի գործերը: (Հ. Գ.)

Պարիզ, 10 մարտի
Պատային ծառայողների պատգա-
մաւորութիւնը յայտնեց կլէմանսօյին
և Բարտուին, որ եթէ գլխաւորները ան-
միջապէս յետ կանչվեն պատային
բաժնումունքները, աշխատանքները
կարելի է վերսկսել այսօր եթէ կլէ-
մանսօն պատասխանեց, որ չը սպա-
սելով ծառայողների միջնորդութեան,
նա արդէն պատուիրել է յետ կանչել
գլխաւորներին: Ժամը 2-ին գլխաւոր
հեռագրատան ծառայողները վերադա-
նարապունքների կպան: (Հ. Գ.)

Պարիզ, 10 մարտի
Պատ-հեռագրական պաշտօնաները
այսօր առաւօտեան 6000 ձայնով ընդ-
դէմ 5700-ի որոշեցին աշխատանքները
վերսկսել: (Հ. Գ.)

Պարիզ, 10 մարտի
Բարտուին յայտնեց պատգամաւորնե-
րի ժողովում, որ պետութիւնը, որ-
պէս գործատու, ընդունելով գործա-
դու անողների պատգամաւորութիւնը,
ցանկանում էր բարի օրինակ տալ
արդիւնաւորներին, և յոյս յայտնեց,
որ պատգամաւորների ժողովը հաւա-
նութեան կը տալ կառավարութեան
այդ վարմունքին: Ապա Բարտու և
Կլէմանսօ յայտնեցին, որ այն կար-
ծիքը, որ իր թէ կառավարութիւնը
ուղղում է դո՛ր բերել Սիմիւնի կա-
ռաւելապէս սխալ է. եթէ նա մինչև
անգամ հրաժարական տար, այդ հրա-
ժարականը չէր ընդունվի: Պատգամա-
ւորների ժողովը 344 ձայնով 136-ի
դէմ ընդունեց հերթական գործերին
անցնելու առաջարկված բանաձեւը, որը
վստահութիւն է յայտնում կառավա-
րութեանը: (Հ. Գ.)

Լոնդոն, 10 մարտի
Բեյսինիէքը հարցրում են Արուշի-
րից, որ նացիոնալիստները, դեկա-
վարութեամբ մօլդային, առանց որեւէ
կարգ խախտելու, իրանց ձեռքը գցե-
ցին կառավարչական իշխանութիւնը
Արուշիւրում: Պաշտօնական անձինք
պաշտօնակն են եղած, նշանակված
են նորերը: Երբեքում նացիոնալիստ-
ները նոյնպէս իրանց ձեռքը գցե-
ցին կառավարչական իշխանութիւ-
նը: (Հ. Գ.)

«Բա. Լիստ.»-ին հեռագրում են Պետե-
րուրդից, որ այնտեղ «Պարս» թատրոնում
սկսնալ է տեղի ունեցել Գերմանուհի-
ներից մէկը սկսել է երգել կուպլետներ
Պուրիլիկիէ մասին: Ներկայ եղող սօսի-
նիկները յարձակվել են երգչուհու վրա,
հանդիսականները վրդովվել են այդ վա-
րմունքից: Արդէն սկսվում էր սուր ու դժ-
բոյ, որի առաջին առաւ շուտով ոստիկա-
նութիւնը:

Տուրայի նահանգապետը իր շրջանի սահ-
մաններից արտաքսել է Լ. Ն. Տօլստոյի
յայտնի բարեկամ Չերտկովին:

ՆԵՐՔԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ՏՆԱՅՆԱՊՈՐՏԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄՄԻ
ՄԻՄԱՐԿԻ

«Մշակի» երէկվայ համարում մեր գե-
տիկները անայնպիսի կամաւորա-
ւոր ծրագրեր:
Դա բաղկացած է ութ կէտերից, որոնցից
յուրաքանչիւրը պարունակում է իր մէջ
բազմաթիւ հարցեր, վերաբերեալ տնայա-
գործական արհեստների զարգացման, ար-
դիւնքների վաճառահանութեան և արդիւ-
նագործութեան կազմակերպութեան:
Անհրաժեշտ է, որ համագործակցող մաս-
նակցողները կարող լինեն շոշափել տնայ-
նագործութեան վերաբերեալ կարեւոր խն-
դիրները և իրանց քննութիւններով ու
խորհրդածութիւններով նպաստելն պար-

